

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄԵՆԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ.

ԹԻՖԼԻՍԻ ՄԻՔՈՅԷԼԵԱՆ ԱՐՋԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԸ
յայտարարում է ի գիտութիւն այն ծնողների, որոնք ցանկանում են իրանց զաւակներին տալ այդ դպրոցը, որ վերջիշեալ դպրոցը մանկու համար հետեւեալ պայմաններն են պահանջում: 1) Գալոցի գրեթե ամբողջ հասարակ թիվը վրա խնդրեք տալու ժամանակ անհրաժեշտ է աւելացնել դիմումները մեարքեական վկայականը, ծաղիկ կարելու և առողջ կազմուած ունենալու վերաբերեալ վկայականները և վարքի մասին վկայականը, եթէ երեխան առաջ սովորել է մի որ և է դպրոցում: 2) Գալոցի ընդունվելու համար անհրաժեշտ է, որ ընդունվողի տարիքը 13½ տարեկանից պակաս չը լինի (այս տարեկան սեպտեմբերի 1-ին) և ոչ աւելի 18 տարեկանից: 3) Պէտք է որ դպրոց մտնել ցանկացողը բռնէ սահմանված քննութիւնը կրօնից, ռուսաց լեզուից, հայոց կամ վրաց լեզուից (եթէ քննվողը տեղացի է) և թուրքական լեզուից: Գալոցի մասին կարել է խմանալ դպրոցի զեւանստանը, ուր և արվում են խնդրները ամեն օր 8 ժամից մինչև 12: Քննութիւնների և վերաքննութիւնների օրվայ մասին առանձին կը յայտարարվի: 1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազատամիտ թիւրքաց կուսակցութիւնը.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական տեղեկութիւններ խորհրդի մասին. Շահաւանդի կոնցերտը. Պաշտօնական տեղեկութիւններ. Ներքին լուրեր.— ԱՐՋԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքիա. Արտաքին լուրեր.— ԽԱՌԻՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱՍԻՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱԶԱՏԱՄԻՏ ԹԻՒՐԿԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հաս ժամանակ չէ որ թիւրքաց ազատամիտ, սահմանադրական կուսակցութիւնը սկսեց հրատարակել լուծարում իր օրդանը ֆրանսերէն լեզուով «La Turquie Libre» (Ազատ թիւրքիա) պարբերական լրագիրը խօսում է թիւրքաց ազատական սուլթան Աբդուլ-Համիդի թագաւորութեան մասին, որի ժամանակ թիւրքիան հեռացեալ կորցրեց իր նահանգներից շատերը, այն է թէ թիւրքիայի այժմեան թէ քաղաքական և թէ անտեսական վիճակը բարեկարգու համար մի միջոց կայ միայն, այն է սահմանադրութիւն սալ ժողովրդին, մեծ համակրութեամբ և վերաբերումով դէպի թիւրքաց հայտանքի բոլոր ազգութիւնները, մեծ համակրութեամբ է վերաբերում և դէպի հայերը, ցաւ յայտնելով որ նրանք անդադար հարստահարված են լինում թէ թիւրք պաշտօնականներից և թէ քիւրդ ազգականից հրոսակներից, վերջապէս պահանջում է որ ամբողջ թիւրքիան ուրիշ քաղաքական հրահանգներով խառնուի ստանայ, այսինքն որ սահմանադրական կառավարութեան հետ միասին թիւրքիայի իւրաքանչիւր նահանգին տրվի վարչական ինքնավարութիւն: «La Turquie Libre» լրագիրը ուրախութեամբ ողջունում է Գալոցի ընտրութիւնը, յոյս յայտնելով որ ծերունի պետական գործիչը Աղլայի առաջին միւնիստր դառնալով կը նպաստէ իր հեղինակութեամբ թիւրքիայում բեֆօրմներ իրագործելուն, քանի որ նա միշտ համակրում էր ազատամիտ ուղղութեանը, միշտ պաշտպան էր հանդիսանում բոլոր թիւրքահայտակարներից և փոխադարձ հաւատարմութեան գաղափարը, պաշտպան էր հանդիսանում ծննդած ազգերի իրաւունքի, անողորմ կերպով բողբոջելով թիւրք բնակչությանը, պաշտօնականների դասի գործունէութեան եղանակի դէմ և նրա գործած հարստահարութիւնների դէմ: Ողբան անկեղծ են ազատամիտ թիւրքաց կուսակցութեան մարերը, որ նա արապայտում է լուծարում իր հրատարակվող թերթի մէջ, այդ մէջ չը դիտել: Մեզ կատակելի է թվում միմիայն այն համակրութիւնը, որ ազատամիտ մահմետականների օրդանը արտայայտում է դէպի թիւրքահայտակարներից և զբաղւորները, ինքն ըստ ինքեան, Ղուրանի և Շարիաթի ոգուն համեմատ, մահմետականը երբէք ոչ մի աշխատանքին և զբաղւոր չէ կարող համարել:...

Երբ 1876 թվին Միջհամ-փաշայի մեծ

վիզիրութեան և թիւրքիայի նրա շնորհած հռչակաւոր թիւրքաց սահմանադրութեան ժամանակ մեք «Մշակում» թերահաւատութեամբ վերաբերվեցանք դէպի Միջհամ թիւրքիայում մտնող նոր կարգերը, նայեցինք հռչակաւոր թիւրքաց սահմանադրութեան և պարզապէս վրա, պիտեւր թէ այդ սահմանադրութիւնը և պարզապէս լինում էր իրական, քանի որ Միջհամ-փաշայի ձեռքով թիւրքիայում մտնող նոր կարգերը արդիւնք չեն համարադրվել քաղաքական թիւրքիան, այլ մի դիմակ են աւելի էլ հաստատ հիմքերի վրա դնելու պահպանման իրաւունքը սկզբունքը, այնքանք որ ազատամիտ և սահմանադրական թիւրքաց կուսակցութիւնը և ինքն Միջհամ-փաշան կեղծ և քաղաքական են, բայց իսկապէս դիմակաւորված մահմետական ամենաթուրք ֆանատիկոսներ են, այն ժամանակ մեր մամուլը յետադէմ մտքը, որը զիտուր ներկայացուցինք էր «Մեզու Հայաստանի» լրագիրը, սաստիկ յարձակվեց «Մշակ» դէմ, ինքնակեղ պաշտպան հանդիսանալով Միջհամ-փաշայի ուղղութեան և գործունէութեան եղանակի: Մակայն այս օրերս զարմացմամբ տեսանք 1876 թվին մեր յայտնած մտքերի կրկնութիւնը, աւելի էլ բացորոշ կերպով մայրաքաղաքի «Вѣстникъ Европы» լուրք ամսագրի ներկայ տարեկան յուլիսի տետրակի մի յօդուածում, որը կրում է «КЪЛЫМЪ-АДАН» վերնագիրը, և որը հարկաւոր է մեզ մանրամասն կերպով Արդիւ-Աղլայ սուլթանի սպանման ամբողջ պատմութիւնը: Պատմողը պ. Վ. Տեպլով (В. Тепловъ), իր յօդուածում մի ամբողջ պատկեր է ներկայացնում թիւրքիայի այն ժամանակվայ քաղաքական անմիջական վիճակի, նկարագրում է սուլթանի սպանման սարսափելի դրաման, որպէս այն ժամանակվայ բոլոր պատահած անցքերի ակնաստեա: Հետքերը է պ. Տեպլովի կարծիքը թիւրքաց ազատամիտ կուսակցութեան մասին և ուղարկութեան արժանի են հեղինակի գրելով մեզ ներկայացրած բնորոշ գծերը թիւրք սահմանադրական սահմանադրութեան: «Ազատամիտ» թիւրքաց կուսակցութիւնը, կամ «Մանուկ-թիւրքիան» կազմակերպվեց դեռ ևս վախճաններով թաւանանքում և համարվում է Եւրոպայում ծննդաւոր ազատամիտ, թարմ, քաղաքակրթ զաւաճարների դրօշակակիր: Այդ կուսակցութիւնը ձգտում է իր թէ, Եւրոպայի հետ սերտ կապեր կապելով, փոխ առնել արեւմտեան եւրոպական քաղաքական հաստատութիւնները և մտնելով նրանց թիւրքիայի մէջ՝ կենդանացնել նրանցով իր հայրենիքի հետցած, պառաւած քաղաքական կազմակերպութիւնը: Մակայն այդ կուսակցութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ եւրոպական մարերով դիմակաւորված մահմետական բռն ֆանատիկոսների մի խումբ, որն աւելով առում է ամեն բան, ինչ որ եւրոպական է, առում է լուսաւորութիւնը,

քրիստոնէութիւնը և այլն: Հեռահեռ այդ կուսակցութեան բռն զաւաճարները սկսեցին ներկայանալ մեր աչքերի առջև իրանց ամբողջ մեղութեամբ, կուսակցութիւնը անընդհատաբար ձգտում էր դէպի պահպանման դէպի պահպանման դէպի մահմետականների ընդհանուր միութիւն, քաղաքական մի գործակի տակ, որպէս զի աւելի հեշտ լինել վերջ ի վերջոյ բացարձակ և անողորմ պատերազմ յայտնել քրիստոնէութեան դէմ: Նոյն իսկ իրանց համակրութիւնը դէպի սահմանադրութիւնն ու պարզապէս բռն մահմետական, ֆանատիկոսական բնաւորութիւն ունէր: Մահմետական սուլթ օրէնքի, Շարիաթի գործութեամբ, ուղղափառների պետը, սուլթանը, իրաւունք ունի կառավարել իր ժողովրդի ժողովրդի հետ անդադար խորհրդակցելով, ուրիշն աղաքյի ժողով պարզապէս ապաւոր թոյլատրվում է Ղուրանով և Շարիաթով: Սակայն խորհրդակցել ժողովրդի հետ, նշանակում է խորհրդակցել միմիայն հաւատացեալներին հետ, ուրիշն պարզապէս է, որ թիւրքաց պարզապէս արեւմտեան պետք է բաղկացած լինել միմիայն մահմետականներին: Այդ ուղղութեանը հետեւելով ի հարկէ, յաջորդաբար լինելու համար, պետք էր հեռացնել քրիստոնէական տարրը և վարչական մարմնից, և դատարանից, և դպրոցներից և հասարակական բոլոր նշանաւոր պաշտօններէն: Արդէն 1876 թվին, Կ. Պոլսի լիցէյ ասիած պետական դպրոցի կառավարելու Ալի-Սուլայի-է-Բեհեդի, ազատամիտ թիւրքաց կուսակցութեան ջերմ կուսակցներից մէկը իր պաշտօնը ստանձնելուն պէս անմիջապէս վաճառեց դպրոցից ոչ թէ միայն բոլոր քրիստոնէական ուսուցիչներին, բայց և դպրոցում եղած բոլոր թիւրքահայտակար քրիստոնէական աշակերտներին, թուով 95 հոգի չը նայելով որ դպրոցի կանոնադրութեամբ դպրոցում իրաւունք ունէին ուսում առնել թիւրքահայտակար բոլոր երեխաներ, առանց ազգութեան և կրօնի խտրութեան: Ազատամիտ թիւրքաց կուսակցութիւնը ընդդէմ էր և այն բանին, որ քրիստոնէականները իրաւունք ունենային դատաւորներ լինել և նոյն իսկ վարչութիւն սալ թիւրքաց գաւառներում: Հեռահեռ իր կեղծ դիմակը հանելով, ազատամիտ թիւրքաց կուսակցութիւնը, առում է «Вѣстникъ Европы» ամսագրի յօդուածագիրը, վերջապէս դեռ Արդիւ-Աղլայ թագաւորութեան ժամանակ ցոյց տուեց իր իսկական և աղբիւր պատկերը, նրա վերջնական նպատակն էր անողորմ պատերազմ քրիստոնէութեան և եւրոպական քաղաքակրթութեան դէմ և մի բրո-չիւրում, որը այդ ժամանակ հրատարակվեց արաբերէն լեզուով և հարիւր հազար օրինակներով տարածվեց մահմետական աշխարհում՝ պարզ յայտնված է նախ ձեռք տուած դէպի այդ տեսակ անողորմ պատերազմ, և ապա այն միտքն է արտայայտված, որ Ղուրանը պարունակում է իր մէջ ամբողջ մարդկային խմատութիւնը և կարող է իրանով վերաբերել եւրոպական ամբողջ քաղաքակրթութիւնը:...

Մենք կրկնում ենք. մեզ յայտնի չէ թէ ինչ է լուծարում այժմ լոյս տեսնող «La Turquie Libre» թիւրքաց ազատամիտ և իրր սահմանադրական կուսակցութեան օրդանի բռն և վերջնական նպատակը, բայց եթէ այդ օրդանն էլ ուրիշ բան չէ եթէ ոչ մի կեղծաւոր արտայայտութիւն թիւրք ազատամիտութեան, եւրոպական քաղաքակրթութեան իր համակրող, դիմակաւորված ամենաթուրք մահմետական ֆանատիկոսական արգասիք, եթէ նա շարունակութիւն է եօթնամեակական թաւանանքների թիւրք կրիստոսարդ ամբողջ կուսակցութեան կեղծ ազատամիտութեան և կեղծ—սահմանադրական ոգու, որի նպատակն էր

միայն թող փչել եւրոպացիների աչքին, այն ժամանակ մենք շատ էլ առիթ չը պէտք է ունենանք ուրախանալու, որ այդ թերթը հանդէս է եկել այժմ եւրոպական մամուլի սասարեղում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈՒՆԴԱՅԻ ՄԱՍԻՆ

Թիֆլիսի Միքայելեան հիւանդանոցում յուլիսի 28-ին առաւօտեան կային 6 տղամարդիկ և 2 կանայք, օրվայ ընթացքում աւելացել են 4 տղամարդիկ՝ Գաբո Մադաթով (9-դ քաղ.), Կոնստանտին Սուսանիձէ (8-դ քաղ.), Խան Մուսաբով (5-դ քաղ. հոգեւոր սեմինարիայի շինութիւն) և Ալեքսան Մալքի (փոխարկած է զօմանցից) և 2 կանայք՝ Աննա Խլինա (1 քաղ.) և Լիւբով Կոսովա (10-դ քաղ.), հիւանդանոցից դուրս են գնացել 2 տղամարդիկ՝ Վասիլիկ և Ալեքսանդր. մնուել են 2 հոգի՝ Կոլլապով և Մադաթով. յուլիսի 30-ին առաւօտեան կային հիւանդանոցում 7 տղամարդիկ և 3 կանայք: Յուլիսի 29-ին մահմետականների ժամանակաւոր խորհրդային հիւանդանոցը մտել են 2 հոգի, յուլիսի 30-ին հիւանդանոցում մնացել էին 3 հիւանդներ: Հիւանդացել էին և տանն էին բժշկվում յուլիսի 28-ին՝ Վերա Պերեդելեյսկա տղանուհու 6 տարեկան մի աղջիկ (1-ին քաղ.) և Յիւրիկ Ղուստ, 17 տարեկան (Ալեքսանդրեւոբի կոնցիպուտ, Մուշտայիլի կտնդ): Մտուել են տանը՝ յուլիսի 28-ին—Արտեմ Աւթանդիւով, 5 տարեկան և Միխայիլ Գերկուլովիլի, 33 տարեկան, յուլիսի 29-ին—Սօֆիա Մայստրաձէ և Պրասկովյա Նեղոսպասովա: Յուլիսի 27-ին Գորիւմ կրկին հիւանդացել են 10, մնուել են 10, առաջացել են 2, յուլիսի 28-ին կրկին հիւանդացել են 25, մնուել են 12, մնացել են 34 հոգի, յուլիսի 29-ին հիւանդացել են 10, մնուել են 7, մնացել են 34 հոգի: Գորու գաւառի Միխայելով քաղաքում յուլիսի 29-ին հիւանդացել է և Գորու բարակն է ուղարկված կանոնաւոր Խան Վոսիկով: Գորու գաւառապետը հաղորդում է, որ յուլիսի 21-ից մինչև 25-ը հիւանդացողներ եղել են հետեւեալ տեղերում. Յիւրիկով գիւղում հիւանդացել են 22, մնուել են 9, Սախաշեի գիւղում հիւանդացել են 4, մնուել են 2, Ալեքսեւիլի հիւանդացել է 1, մնուել են 2, Գլանի հիւանդացել է 1, մնուել են 2, Ալեքսեւիլի հիւանդացել է 1, մնուել են 1, Զէմ-Նիկիտի հիւանդացել են 4, մնուել են 3, Զէմ-Աղաբեկի հիւանդացել են 10, մնուել են 5, Թամարաշեի հիւանդացել են 5, մնուել է 1, Գլովիլի հիւանդացել են 10, մնուել են 7, Խիլիի հիւանդացել է 1, մնուել է 1, Տիլիլիի հիւանդացել է 1, մնուել են 3, Բրոցեւի հիւանդացել է 1, մնուել է 1, Երմեկի հիւանդացել է 1, մնուել է 1, Ախալքալաք գիւղում (յուլիսի 24-ից մինչև 26-ը) հիւանդացել են 27, մնուել են 12, Զոլեւի հիւանդացել են 9, մնուել են 2, Զէմ-Խանդակի հիւանդացել են 6, մնուել են 3, Կովիլիի գաւառում ժամանակ հիւանդացել են 35, մնուել են 1, Կասպի հիւանդացել են 10, մնուել են 3, Բրեյիլի հիւանդացել են 3, մնուել են 2, Բուխի գ. հիւանդացել են 7, մնուել են 3 հոգի: Գուլիլի գաւառում, Կսովիլի գիւղում, յուլիսի 21-ից մինչև 25-ը կրկին հիւանդացել են 6, մնուել են 7, առաջացել են 3, մնացել են հիւանդներ 4, Յիլիանի գիւղում յուլիսի 19-ից մինչև 26-ը կրկին հիւանդացել են 32, մնուել են 5, առաջացել են 7, մնացել են հիւանդներ 20 հոգի:

մանի խեղճ հայոց ճիսական-եկեղեցական
ոյնների թիմական տեսուչ Մեսրոպը ք. Մե-
հակոբյան հետևեալ գտելի չըջարեականն է ուղար-
կել թիմի, ուսուցչինքնին և ուսուցչուհինքին:
Թուրքներն Կովկասի և Ռուսաստանին շատ քա-
ներ ու շէնքի ոտ դնելով, այժմ սկսել է իր
ներքը ցոյց տալ նաև Երևանի վիճակի մի
և անդերում: Թուրքայի տարածման դէմ մա-
շտու պարտաւորութիւն ունի ամէն ոք ինչ
ցով որ կարող է, քանի որ ամենքի կեանքը
տարապէս վտանգի ենթարկելու հանդամա-
նէջ է, ուստի սոյն ուշածու գրութեամբ դի-
մել ձեզ, սիրելի ուսուցչիներ և ուսուցչուհի-
նդուրով եմ ձեզինից, իբրև հասարակութեան
ունջ և սրտացաւ անդամներից, մուսացու-
ն տալով ամբաջան հանդիստը, ասպարեղ
և ձեր խօսքերով, ձեր յորդոյներով ամեն
մանաւանդ պիւղերում, ուր և յայտնա-
կը գտնեք, խօսեցէք ժողովոյն մեր հարե-

ԽԱՌԻՆ ԼՈՒՐԵՐ

✱
✱ ✱

*
* *

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՅ

ՊԵՏԵՐՅԱՆ, 29 յուլիսի: Իսկողմնային պատ-

10,5%՝ 10,5, 31 յուլիս: Համայնքների ժողովը 50 ձայների առաւելութեամբ ընդդէմ 310-ի իր եղոհութիւնն արտայայտեց Սըլզըրիի միւնիսպալիտեան: Վերջինս պէտք է հրաժարական տայ:

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Է Ր

ԽՕԼԷՐԱՅԻ

ԿԻՐ ՀԱՅԿԷ. Тифлисъ. Каравансарай Зубалова. Мартиросу Пирамянцу.
Tiflis. Karavansaraï Zoubaloff. M. S. Piranianz. № 85 1—2

ЯИЧНОЕ НУМЕРНОЕ
МЫЛО.

ГЛИЦЕРИНОВОЕ
ЯИЧНОЕ МЫЛО

ВЪСОВОЕ ЯИЧНОЕ
МЫЛО.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

ՀԱՐՈՒՆԿԱԴՐՈՒ

Թ Ի Յ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի
 ԳԼԽ (Յուլի) 1892

Дозволено цензурою, Тифлисъ, 31 Іюля 1892 г.

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорист-Меликовская ул., д. 633.